

ցոյց՝ յանկարծ մենք ևս ներս խուժեցինք, սկսանք մեր գրութեան վերայ խորհիլ, վասն զի անասունք դարման՝ մենք ևս հաց չունէինք:

Անոնք որ յոյսերնին գարնան վերայ դրած լինելով՝ խոչընդոտներու գիմագրելով՝ պատրաստութիւն չէին տեսած, կոտորուեցան նորա անասնոց $\frac{1}{3}$ ը կամ աւելին, որոյ միսն ստիպուած են շներու առջև ձգել, անոր համար որ պահք է, անոր համար որ սատկած է, անոր համար որ նիհար է:

Չիւնը դարձեալ լեռ սար բռնեց, սակայն գետերն չը կարողացաւ կասեցնել, աւելի առատորէն սկսաւ ընթանալ դէպի Շեռեան և Մուրատ:

Ժողովուրդն իւր յոյսն չէ կտրած, «ձիւն վըր ձեան ցեց» առածը շատ լաւ սերտած է:

Յիրաւի երկու օր յետոյ տեսնուեցաւ յարևելից սևութիւնը արագօրէն կը գայ, Մարտի 25 էր Գիատին, 26ին Քարա—Քիլիսէ և 27—28 ին Ալաշկերտ սևացաւ:

Ժողովուրդն իւր ուրախութեան հետ նաև ունի երկիւղ, կը յիշէ պառուանց ցրտի առածն, նաև կը յիշէ «Մի վախենար Մարտի ցրտից, վախցիր Ապրիլի հնգից՝ եղը կը բաժնէ ուր ընկերից»:

Ապրելի մէկն էր, ժողովուրդն սկսած էր լծքեր պատրաստել, սկսաւ շլոփայ տեղալ, երկրագործն որ սկսած էր հանգիստ շունչ քաշել, դարձեալ արգելուեցաւ ի ներս:

Ոմանք ձեան և շլոփային չը նայելով՝ սկսան սևացած վայրերը սերմանել:

Ապրելի 7ն էր, աւետման տօնը կատարելու վերայ էինք բանջրաբուսիկ (ամինամանր կարկուտ) տեղաց ամեն մարդ ուրախ էր այլ ևս ձմեռն անցած կը համարուէր, սակայն ես ձեզի կը հաւատացնեմ որ մինչև ապրելի վերջն անձրևը՝ կարկուտը թոյլ չը տար երկրագործին որ սերմանէ, երբեմն Մայիսի 15ը:

